



ՀԱՅՈՒՆ ԱՌՈՂՋ
ՓՈԽՎՐԻԽՈՂՎՆԵՐ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Ա. Ա. ԳՐՈՒՐՅԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿԵԵՔ
ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԵջ
ՍԱՔՐԱՄԻՐՈՒԹՅԱՆ
ՈՒԽԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

613
9-99

ՊԵԶՐԱՆ 1939

20 JUL 2010

Ա. Մ. ԳՐՈՒՇՅԱՆ

613
4-99 48.

ԴԱՍՏԻԱՐԱԿԵՆՔ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵԶ
ՄԱԳՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզմանություն ուսուելի 2-րդ
լրացրած հրատակությունից

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

7.03.2013

2020



2578

39

С. М. Громбах
Воспитаем у детей навыки чистоты
и опрятности
Гиз. Арм. ССР Ереван, 1939.

Վորտեղ մայրություն, անտեղ
կար կա ամեն ինչում:
Վորտեղ կար կա, աշխատանքը
չի իմանում կանգառում:
Մեծ արգելներից մենք մեզ
կազսենք,
Թե մեր մայրության մենք յափ
հետեւենք:
(Դեմյան Բեդճի)

ԿՈՒՆՍՈՒՐԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կուլտուրական առողջ փոխարինողներ ստեղ-
ֆելու գործում հսկայական նշանակություն ունի
կուլտուրական ունակությունների, ճշտապահու-
թյան, մաքրասիրության ու մաքրության ոռվո-
րույթների դաստիարակությունը:

Մաքրությունը կուլտուրականության մշտա-
կան ուղեկիցն է: Այն դպրոցականը, վորն ան-
փույթ և վերաբերվում գեղի յուր արտաքինը,
վորի յեղանգների տակ կեղա կա, վորի կոճակ-
ները կախ են ընկած կամ մազերը չսանրած, սո-

գորաբար անմիությթ եւ վերաբերվում նաև դեպի
յուր աշխատանքները։ Յեվ կարո՞ղ եւ արդյոք նա
լավ սովորել, յերբ նրա զրգերը կեղտոտ են ու
քրքրված, իսկ տեսրերը թանաքոտված ու մրտա-
ված։

Արտաքին մաքրությունն ու ճշտապահու-
թյունը դատարկ բան չե։ Մաքրության սովո-
րութը յերեխաններին ճշտապահություն ե սովո-
ր, եցում ամեն ինչում՝ վարքում, աշխատանքում,
առաջադրանքներ կատարելու մեջ։

Մաքրության հարցն այժմ կուսակցության և
կառավարության կողմից դրված ե սկզբունքային
մեծ բարձրության վրա, վորպես աշխատավո-
րության կենցաղը բարելավելու հետ կապված
քաղաքական խնդիր։

«Հիգիենայի և սանիտարիայի ունակու-
թյունները կամպանիական հարցեր չեն հանդի-
սանում և այդպիսիք այետք ե պատվաստել մոչ
լոգոմզներով, վոչ գրոհներով, այլ լուրջ ու
համառ աշխատանքով, ամրացնելով կուլտուրան
կենցաղում, սովորութում» (Միկոյան— «Բոլ-
շևիկ» № 9–10, 1934 թ. էջ 9)։

Առանց մաքրություն պահպանելու, իսկական
կուլտուրականություն անհնար ե։

Զի կարելի մոռանալ նաև հին ճիշտ կանոն՝
«Մաքրությունը առողջության յերաշխիքն ե»։

Մաքրությունն իրոք պաշտպանում ե չատ
հիվանդություններից։ Վարակիչ հիվանդու-
թյունները, վորոնք անցյալում այնքան զոհեր
ելին տանում, առաջանում են միկրոբներից
մանրաղույն կենդան եյակներից, վորոնք ան-
տեսանելի յեն հասարակ աչքով։ Ընկնելով
մարդկային որգանիզմի մեջ, միկրոբները կա-
րող են առաջացնել այս կամ այն հիվանդու-
թյունը։ Միկրոբներն առանձնապես հեշտու-
թյամբ բազմանում են և յերկար ապրում կեղ-
տի մեջ։

Կեղտի դեմ պայքարելու սովորութը յերե-
խանների մեջ պետք ե մշակել հենց վաղ հասակից։
Դրա համար ծնողներն իրենք պետք ե մաքրասեր
լինեն, «ըինակ ծառայեն յերեխաններին և անեն
բոլոր հնարավորը, վորպեսզի ըրջապատեն նրանց
մաքրության և ճշտապահության ըրջակայու-
թյամբ։

Դա կպաշտպանի յերեխաններին վարակիչ հի-
վանդություններով հիվանդանալու հնարավորու-
թյունից և կովորեցնի նրանց խնամելու իրենց
մտրմինը, իրենց իրեղը։

Դպրոցում, մանկապարտեղում, բոլոր ման-
կական հիմնարկներում յերեխաններին պատվաս-
տում են մաքրասիրության և ճշտապահության
անակություններ։

Ծնողները պետք ե ողնեն այդ բանում :

Ցեթե գպրոցում յերեխային սովորեցնում էն, փոք անհրաժեշտ ե լվացվել, հետեւ մաքրության և այլն, իսկ տանն այդ մասին նրան վոչինչ չեն ասում, կամ ավելի վատ, այդ նույն յերեխան հանդիպում ե կեղտի ու փնթիռթյան, դժվար թե նա մաքրասեր ու ճշտապահ լինի:

Անհրաժեշտ ե, վորպեսզի ծնողները լիովին դիտալցեն, թե յերեխաների առողջությունը պահպանելու և ամրապնդելու գործում ինչքան կտրենոր ե մաքրությունը և սովորեցնեն այն իրենց յերեխաներին: Սա չի նշանակում, թե պետք ե վախիցնել յերեխաներին, յերկուդ ներշնչել նըրանց հիվանդությունների նկատմամբ: Ահ առլեկասկածոտ ու կամակոր ե դարձնում յերեխաներին:

Բայց զիտենալ այն մասին, թե առողջ լինելու համար ինչպես պահել իրեն, և թե ինչ նշանակություն ունի դրա համար մաքրությունը, հարկավոր ե յերեխաներին տալ նրանց պիտակից կյանքի հենց սկզբին:

ՈՒՏԵԼԻՔ, ԽՄԵԼԻՔ ՑԵՎ ԱՄԱՆԵՂԵՆ

Հոկայական նշանակություն ունի այն ամենի մաքրությունը, ինչ կապված ե ոննդի հետ:

Մի ամբողջ շարք ստամոքս-աղիքային հիգանդություններ առաջ են գալիս կերակրի մեջ կեղտոտված մթերքներ կամ վատորակ հում յուր գործածելուց:

Հում ջուրը հեշտությամբ կարող ե կեղտոտվել զանազան թափիթփուկներով: Նրա մեջ կարող են գտնվել վորովայնատիֆ, պարատիֆ, դիղենտերիա (արյունալուծ) և ուրիշ ստամոքս-աղիքային հիվանդություններ առաջացնող միկրոբներ:

Հում ջուր կարելի յե խմել միայն այն գեղքում, յերբ բժիշկը միանդամայն լավորակ գըտնի նրա աղբյուրը, որինակ, լավ ջրմուղի, մաքուր աղբյուրի, արտեղյան ջրհորի ջուրը: Իսկ յեթե տվյալ վայրում յերեացին ստամոքսաղիքային հիվանդություններ, որինակ, վորովայնատիֆ կամ դիղենտերիա, ապա պետք ե բոլորվին հրաժարվել հում ջուր գործածելուց:

Զափաղանց կարևոր ե նաև խմելու ջրի կանոնավոր պահելը: Վորպեսզի ջուրը չկեղտոտվի, հարկավոր ե պահել անպայման առանց ճեղքերի

քիմ կակվող կափարիչ ունեցող բաքի կամ տա-
կառիկի մէջ :

Հողի փոքրիկ մասնիկներով և վուշով ծած-
կը ված բանջարեղենն ու մրդերը նույնպես կարող
են վարակ փոխանցել : Այդպիսի բանջարեղենն
ու միրդը կարելի յե ուտել միայն յեռացրած ջը-
րով լավ լվանալուց հետո : Յեռացրած ջուրն ան-
վըտանդ ե , վորովհետեւ յեռացնելու ժամանակ
միկրոբները բարձր ջերմաստիճանից վոչնչա-
նում են :

Հարկավոր ե ուշադրությամբ հետեւել բոլոր
անդամթերքների մաքրությանը : Կեզտոտ ու-
տելիքն ընկնելով ստամոքսի մեջ, կարող ե հի-
վանդության պատճառ դառնալ :

Մեծ վնաս են հասցնում ճանձերը ։ Թռչելով
աեղից տեղ, հաճախ աղբակույտից հացի կամ այլ
անդամթերքների վրա ճանձերը տարածում են
վարակը : Դրա համար հարկավոր ե ուտելիքն
այնպես պահել, վորպեսզի ճանձերը չնստեն նը-
րանց վրա :

Կարևոր ե հետեւել ամանեղենի մաքրությա-
նը : Ամենից առաջ անհբաժեշտ ե միանդամ ընդ-
ժիշտ հրաժարվել գեռես վորոշ ընտանիքներում
գոյություն ունեցող անկուլտուրական սովորու-
թյունից ընդհանուր ամանից ուտելու սովորու-
թյունից : Ընտանիքի յուրաքանչյուր անդամ,

ինչպես մեծահասակ, այնպես ել յերեխա,
պետք ե ուտի առանձին ամանից, առանձին
դդալով կամ պատառաքաղով :

Սա չի նշանակում, թե ամեն մեկը պետք ե
ունենա իրեն զգալը, իրեն բաժակը — միմիայն
իրեն համար : Այդ բոլորը կարող ե ընդհանուր
մնել ընտանիքում . սայց ոգտվել ամանից, յերբ
նրանից ոգտվել ե ուրիշը, կարելի յե միայն խը-
նամքով լվանալուց հետո :

Ամանները պետք ե լվանալ տաք ջրով, ավելի
լավ ե սապոնով : Զուրը՝ պետք ե հաճախ փոխել,
բոլոր ամանները չլվանալ միյեվնույն ջրում,
վորովհետեւ նա չատ չուտ կեզտոտվում ե : Բոլոր
ամանները տաք ջրով ու սապոնով լվանալուց հե-
տո, պետք ե մեկ անդամ ևս ողողել տաք կամ
կու ջրով : Այդ ժամանակ միայն կարելի յե
նրանց մաքրությունը համարել :

Առանձին գեղքերում, ընտանիքի անդամներից
փորեւ մեկի, որինակ, տուբերկուլյոզով հիվանդ
լինելու հետևանքով, բժիշկը կարող ե անհրա-
ժեշտ համարել առանձնացնել նրա համար բոլո-
րովին ջոկ ամաններ :

Առավել ևս կարևոր ե զգույշ լինել տեից
գուրս :

Շատ յերեխաններ մի վատ սովորություն ու-
նեն . դպրոցում կամ փողոցում ջուր են խմում

Ջրմուղից, չըթունքներով բռնելով նրա ծորակը:
Դա միանգամայն անթույլատրելի յէ: Պետք և
սովորեցնել յերեխաներին չանել այդ բանը:

Ամենից լավ և խուսափել նաև ընդհանուր
զալաթով խմելուց: Գալաթը, վորից ողավում
ևն բոլորը, հեշտությամբ կարող և վարակի փո-
խանցիչ գաւառալ: Այդ միջոցով յմրեմն վարակ-
վում են տուքերկուլյուզով, սիֆիլիսով և այլ հի-
վանդություններով: Այդ պատճառով վաճառար-
կը զեղներում ու կիոսկներում, վորտեղ ամառը դադ
տված ջուր, պտղահյութ և այլ խմելիքներ են
վաճառում, անհրաժեշտ և խատորեն հետեւ,
վրապեսզի բաժաները լավ միացվեն հոսող ջրով:

Հրաշալի ձեռնարկում և այժմ մեր շատ դըպ-
րոցներում և այլ հասարակական վայրերում
մտցրած շատրվանիկները: Նրանք հնարավորու-
թյուն են տալիս ջուրը խմել ուզզակի շիթից, ա-
ռանց բաժակի և զալաթի: Սակայն պետք և սո-
վորեցնել յերեխաներին, վորպեսզի նրանք խմեն
խոկապես շիթից և վոչ թե չըթունքներով բռնեն
շատրվանիկի յեղբերը, ինչպես անում են յերե-
խաներից շատերը:

Ուտելիքի և ամանեղենի մաքրությունը միշտ
ել անհրաժեշտ և: Բայց հատուկ ուշադրությամբ
պետք և հետեւ մաքրությանը ստամոքս-աղիքա-
յին հիվանդությունների, որինակ, դիղենաերի-

այի (արյունալուծ) յերկալու ժամանակի: Դա չա-
փաղանց լուրջ և մարդուն վերին աստիճանի հյու-
թող հիվանդություն է: Իսկ նրանով վարակվում
են զլիսավորաբես ուտելու ժամանակ մաքրու-
թյուն չպահպանելու դեպքում:

ԶԵՐՔԵՐԻ ԽՆԱՄՔԻ

Սննդի և ամանեղենի մասին հոգացողու-
թյունը չափաղանց կարելոր է: Ել ավելի կարևոր
և ձեռքերի մաքրության հետեւը: Զեռքերով
մենք վերցնում ենք հացը, ձեռք ենք տալիս ա-
մաներին ու մթերքներին: Յերբ ձեռքերը կեղ-
տոտված են, ապա կեղտը և նրանում յեղած
միկրոբներն անցնում են սննդին, իսկ այնուհե-
տեւ ընկնում ստամոքսի և աղիքների մեջ: Այս-
պիսով մենք ինքներս ենք բաց անում դռները
հիվանդությունների համար:

Զեռքերը հեշտությամբ են կեղտոտվում և
դա միանդամայն հասկանալի յէ: Որվա ընթաց-
քում նրանք դիպչում են հարյուրավոր առարկա-
ների—դռների բռնակների, դրամի և այլն, վո-
րոնց բռնել են ոտար ձեռքեր: Զեռքերի վրա յե-
րնկնում փոշի, հող:

Այդ պատճառով ձեռքերը վորքան կարելի յէ
պետք և հաճախ լվանալ: Համենայն դեպս, ան-

ողայիման լվանալ ամեն անդամ ուտելուց առաջ ։
Այդ բանին պետք է սովորեցնել յերեխաներին
նախագլուղցական հասակից : Յերեխաների մեջ
ուետք և սովորություն դառնա, ուտելուց առաջ
անպայման լվանալ ձեռքերն առանց մեծերի
հիշեցումների :

Յերեխաները պետք է հիշեն այն մասին, վոր
ամեն անդամ զուգարան գնալուց հետո պետք է
անպայման լվանալ ձեռքերը : Զուգարանում բա-
վականաչափ մաքրություն չլինելու դեմքում
կեղտոտվում են մատները, զլխավորապիս յե-
զուկների տակը : Դրա հետ միասին այնուղեղ կա-
րող են ընկնել ճիճուների սաղմեր, վորոնք հետո
կերակրի հետ կարող են անցնել աղիքների մեջ,
խև այստեղ դառնալ մարդուն հյուծող հասուն
ճիճուներ :

Ճիճուներով վարակված են շատ յերեխաներ :
Սա ցույց է տալիս, վոր յերեխաներին չեն սովո-
րեցրել հետեւելու ձեռքերի մաքրությանը :

Մեծ նշանակություն ունի յեղունդների խը-
նամքը : Վորակեսղի նրանց տակը կեղտ չկուտակ-
վի և վորագեսղի յեղունդները չկուրպեն, պետք է
կարծ կտրել : Բայց և այնպես հարկավոր չե շատ
կարծ, նրանց մատերից աճելու տեղից կտրել,
վորովհետեւ դա ցավալից է : Յեղունդների յեղու-
րը պետք է կլորացված լինեն :

22

Դպրոցական յերեխաները, յեթե նրանք սո-
վորեցրած են այդ բանին, կարող են իրենք հե-
տեւել իրենց յեղունդներին :

Կարեոր է, վորագեսղի յերեխաները կրծելով
չողիկն յեղունդները : Բացի նրանից վոր դա վատ
սովորություն է առաջացնում, յեղունդներ կըր-
ծելը նաև վտանգավոր է : Կրծելով յեղունդները,
յերեխան ատամներով ակամա քերում և նրանց
պրայի կեղտը և գրանուի հեշտացնում միկրոբների
և ճիճուների սաղմերի մարսողական որդանների
մեջ ընկնելը :

Ճեռքերը լվանալիս հարկավոր է ուշագրու-
թյամբ հետացնել յեղունդների տակի կեղտը, ոդ-
ուրվելով գրա համար յեղնգամաքրիչով կամ խո-
զանակով : Ճեռքերը պետք է լվանալ անպայման
շաղոնով :

Լվացվելիս պետք է նաև լավ լվանալ ձեռքե-
րը և հետո միայն մաքուր ձեռքերով լվանալ
դեմքը :

Ձեռքերն ու գեմքը լվանալու համար լավ է
ճեռքի սապոն գործածել, նա ավելի լավ է փրո-
քրում և լավ մաքրում մաշկը :

Ճեռքերը լվանալիս առաջ թրջում են ջրով,
հետո սապոնը մի լավ քսում ափերին : Ստացվում
և թանձը ոպիտակ փրփուր : Այդ փրփուրով տր-
ուրաբում են ափերը, գաստակի յետեկի կողմը, բո-

լոր մատները և նախաբազուկը, մինչև արմունկը:

Սապոնի փրփուրը վերցնում է մեր ձեռքերից մաշին, կեղտն ու ճարպը, սպիտակից դառնալով մուգ-դորշագույն:

Սապոնն իջեցնում են ջրով, նորից լավ սապոն ճեռքերը, նորից իջեցնում և այսպես ժիքանի անդամ:

Իսկ միայն ջրով, առանց սապոնի, յերբեք ձեռքերը լավ չեն լվացվի: Կեղտը միայն կըսմովէ մաշկին, բայց չի իջնի:

Լ Վ Ա Յ Ո Ւ Մ

Հաճախ առիթ ե լինում տեսնել, թե ինչպես են լվացվում յերեխաները. թաց ձեռքերով մի յերկու անգամ քսում են քթին ու այտերին և համարում թե լվացվեցին: Մինչդեռ դեմքին ու վըդին ցրված մնում են թաց կեղտերը:

Յերեխաներին պետք ե սովորեցնել կանոնավոր լվացվել: Որվա ընթացքում ահագին փոշի, կեղտ և նստում դեմքին: Պետք ե լվացվել որական յերկու անգամից վոչ պակաս՝ առավոտք քնից վեր կենալուց հետո և յերեկոյան՝ քնելուց առաջ: Անհրաժեշտ ե սապոնով լվանալ ձեռքերը, դեմքը, վեղը, ականջների յետերը:

Այն նախապաշարմունքը կա, թե դեմքը սա-

ունեալ լվանալ չի կարելի, դրանից իբր թե «վը-չանում» ե մաշկը: Դա ճիշտ չե: Մաշկը սապոնից բոլորովին ել չի փչանում, ընդհակառակի, նա ամելի լավ ե մաքրվում: Այդ պատճառով պետք է դեմքն ու վիզը ինչպես հարկավոր և սապոնել, գորպեսզի իջնի նրանց վրայի կեղտը:

Պետք ե լվացվել հոսուն ջրով: Դրա համար լավ ե ոգտվել ծորակից շիթող լվացարանից կամ ջողովի ծորակից: Թասի միջի ջրով լվացվելը ճիշտ չե: Կեղտոտաված ջուրը հոսում է նորից թասի մեջ, հետո հույն այդ ջրով ել լվացվում են: Յեթե ծորակ կամ լվացարան չկա, հարկավոր ե լինում դիմելու վորեն մեկի ողնությանը:

Յերեխան լվացվում ե թասի վրա, իսկ ծնող-ներից կամ մեծ յերեխաներից վորեն մեկը զավաթով կամ սափորով մաքուր ջուր ե լցնում նրա ձեռքերին:

Լվացվելուց հետո չի կարելի դեմքը թողնել թաց վիճակում: Պետք ե յերեխասրբիչով լավ սբուսել դեմքն ու ձեռքերը:

Յերեխայի յերևոսորդիչը պետք ե առանձին ժնի: Անթույլատրելի յե, վորպեսզի ընտանիքի մի քանի անգամներ ոգտվեն միենույն յերես-ութեալիչոց: Այդպիսով կարելի յե վարակվել դըրիպով, տուբերկուլյոնով, աչքերի վարակիչ հի-

վանդությամբ — տրախումայով, վորը յերբեմն
չիակատար կուրության և հասցնում :

ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Լվացվելու ժամանակ պետք է մաքրել նաև
ատամները : Ատամների արանքում մշտապես մը-
նում են կերի մնացորդներ, մոխ մանրաթելիկ-
ներ, վշրանքներ և այլն : Յեթե նրանց այնտե-
ղից չհեռացնենք, ապա նրանք կքայքայվեն բե-
րանի մեջ ու կնեխվեն, իսկ նրանց վրա կզար-
դանան բազմաթիվ միկրոբներ : Դրանից ել փչա-
նում են ատամները :

Յեթե փչացել և յերեխայի ատամը, պետք ե
անմիջապես դիմել ատամնաբուժի, չսպասելով,
վոր սաստիկ ցավի, կամ ատամն սկսի քայքայ-
վել : Ատամի ժամանակին սկսած բուժումը
պաշտպանում է մյուս ատամները փչանալուց :

Պետք է ուշագրությամբ հետեւ բերանի
մաքրությանը : Պետք է հօկել, մարդեսպի բերանի
մեջ, ատամների արանդներում կերի կաորներ չը-
մընան : Դրա համար հորկավոր չե ատամները
փորել լուցկով կամ գնդասեղով, ինչպես անում
են յերբեմն, այլ բավական և որական յերկու ան-
դամ ատամները մաքրել խողանակով ու ատամի

վորշով : Խողանակի մազիկները թափանցում,
մտնում են ատամների միջև յեղած բոլոր ձեղ-
քերն ու խորությունները և մաքրում նրանց :

Ատամներ մաքրելու խողանակը լավ է ընտ-
րել ամենակոշտը : Այդպիսի խողանակը ուժեղ է
քսվում ատամներին, որբելով նրանցից փառը և
ավելի խորը մտնում ատամների արանքը :

Ծնողները հաճախ վախենում են կոչտ խո-
ղանակից, վորովհետեւ իբր թե նրանք մինչև ար-
ևտելը ճանկուտում են լինդերը և կարող են վը-
նասել : Դա ճիշտ չէ : Յեթե լինդերից արյուն ե
սալիս անկախ ատամները մաքրելուց, նշանակում
ե մենք գործ ունենք հիվանդության հետ և պետք
ունենք մասնազետ բժշկի :

39

Հաճախ պատահում է այնպես, վոր լինդե-
րում վոչ մի ցավ չկա, ուսկայն ատամները մաք-
րելու ժամանակ արյուն է զալիս լինդերից : Դա
կատարվում է նրանից, վոր լինդերը, ինչպես ա-
սում են, «թույլ են» և նրանցում յեղած փափուկ
տրնատար անօթները հեշտությամբ են քայքայ-
մում և արնահոսում : Այդպիսի դեպքում խողա-
նակով չփելու միայն ոգուտ է տալիս նա ամրաց-
նում և լինդերը : Արյունահոսությունը ևս կա-
րող է սկզբում հաճախանալ, բայց այնուհետեւ
բոլորովին դադարել :

Խողանակը պետք է ատամների վրայով տա-

Նել վոչ թէ աջից ձախ, կամ ընդհանակը, վարի ժամանակ մնասվում ե ատամի եմալը, այլ վար և վեր: Այդ ձեռով մաքրելու գեղքում էմալը սրահպանվում ե, իսկ խողանակի առանձին մաղիկներն ավելի լավ են մտնում ատամների արանքը: Գետք ե մաքրել ատամի ինչպես արտաքին, այնպես ել ներփին կողմը:

Ատամները լավ մաքրելու համար ատամի փոշի յեն գործածում: Ատամի փոշին բաղկացած ե պիխավորապես կավճից և զանազան հոտավետ նյութերի խառնուրդից (անանուխի կաթիլներ և այլը):

Թրջելով ատամի խողանակը ջրով, նրանով վերցնում են փոշին և այնուհետև մաքրում ատամները, ինչպես ասված եր: Ատամները խողանակով մաքրելուց հետո, Հարկավոր ե բերանը լավ ողողել յեռացրած գոլ ջրով: Փոքր յերեխաները չեն կարողանում այդ բանն անել և կուլ են տալիս ջուրը: Ծնողները պետք ե սովորեցնեն նրանց կանոնավոր ողողել ըերանը:

Մաքրել ատամները և ողողել ըերանը հարկավոր ե լիացվելու ժամանակ առավոտը և յերեկոյան: Ամեն անդամ ուտելուց հետո ևս պետք է ողողել ըերանը:

Ատամի խողանակը և փոշին պետք ե ատամներն տեղ պահել, ավելի լավ և հատուկ փոքր դա-

րակի վրա, վորպեսզի չփոշութեն: Խողանակը պետք ե պահել փակ բնի, սապոնը՝ փակ սապոննումնի մեջ:

Յերեխայի յերեսորբէչը նույնպես պետք է իր մշտական տեղն ունենա:

I. II. III. IV. V.

Դեմքն ու ձեռքեսը լվանալով, իհարկե, չի սահմանափակվում մարմնի մաքրության հոգացողությունը: Անողայման, ձեռքերն ու դեմքը, գորպես մարմնի չծածկված մասեր, ավելի շուտ են կեղտոտպում, բայց մեր մարմնի ամբողջ մաշը ևս իս խնամքի կարիք ունի:

Սովորաբար կարծում են, վոր մաշկը միայն ծածկում ե մեր մարմնը և պաշտպանում ներքին որդանները: Մինչդեռ մաշկը բացի դրանից, կատարում ե նաև մի շարք այլ խնդիրներ, վորոնք կարևոր են մեր որդանիզմի կենսագործունեցության համար:

Ամենից առաջ, մաշկի միջոցով կատարվում ե ողի փոխանակությունը, այսպես կոչված, մաշկային չնչառությունը: Մաշկի ծակոտիների միջոցով մարմնի մեջ ե թափանցում դրսի մաքուր ողը, և արտազատվում բանեցրած վոչ պիտանի ողը:

Բացի գրանից, մաշկի մեջ են դտնվում
քրտնային և ճարպային դեղձերը։ Քրտնային
զեղձերն արտադրում են քրտինք, վորը դուրս և
դալիս մաշկի մակերեսի վրա։ Քրտինքի հետ մի-
ասին որդանիզմից արտազատվում են մի չարք
վնասակար նյութեր, վորոնք դոյացել են որդա-
նիզմի աղբեկու և աշխատելու հետեւանքով։ Քըր-
ուինքը գոլորշիանում և և դրանով հովացնում
մեր մարմինը։ Ճարպային զեղձերն արտադրում
են մաշկը փամփացնող մաշկային ճարպ։

Մաշկը սաստիկ կեղտառովում է։ Մաշկային
արտազատումները՝ ճարպը և քրտինքը, ինչպես
նաև մաշկի վերնաշերտի թափիող բջիջները,
մարմնի վրա ընկած փոշու հետ միասին կեղտ են
դոյացնում։ Այդ կեղտը քայլայվում և արձա-
կում այն առանձնահատուկ անհաճո հոտը, վորը
հատուկ և չլողացած մարդու մարմնին։

Կեղտը փակում է մաշկի ծակոտիները, դրա-
նով խանգարելով ողի փոխանակությունն ու
քրտինքի արտազատումը։ Ճարպային զեղձերի իւր-
ցանվելուց յերեան են գալիս պղուկներ և թարա-
խուռուցքներ։ Կեղտը մաշկի վրա հեշտու-
թյամբ և առաջանում քոսը— մի վարակիչ հի-
վանդություն, վորն առաջ և գալիս քոսատղից։

Այդ պատճառով մաշկի մաքրության հետե-
վելը չափաղանց կարեոր է։ Յեվ պարզ և, վոր

դպրոցական հասակի յերեխաները պետք ե ըմ-
պանեն, թե ինչպիսի ուշադրությամբ պետք ե
հետեւել մարմնի մաքրությանը։

Լողանալու հետ կաղված բոլոր ունակու-
թյունները պետք ե հաստատապես պատվաստել
մանկությունից։

Բոլորովին ել միևնույն չե, թե ինչ ջրով են
լրկանում։

Նախ և առաջ ջուրը պետք ե բավականաչափ
տաք լինի։ Տաք ջուրը սապոնի հետ ամենից լավ
ե իշեցնում մաշկի կեղտը։ Տաք ջուրը փափկա-
ցնում և մաշկը ծածկող ճարպը, իսկ սապոնը լու-
ծում և նրան ու մաքրում փոշու և մաշկի մտ-
կերեսի մեռած մասնիզների հետ միասին։ Առանց
սապոնի միայն ջուրն այդ բանն անել չի կարող։

Սաոր ջրով չի կարելի այնպես լավ ու մա-
քրուր լողանալ, ինչպես տաքով, վորովհետև սա-
ռու ջուրը չի փափկացնում մաշկը և սապոնն ա-
գելի վատ և փրփրում, քան տաքով։ Տաք ջուրը,
դրա հետ միասին ուժնացնում և արյան հոսան-
քը դեպի մաշկը, լայնացնում ծակոտիները և
դրանով ուժեղացնում քրտինքի արտազատումը,
մաշկային չնչառությունը և այլն։

Լողանալու ժամանակ լավ ե գործածել ըս-
պունդ կամ լլֆ (մաշալկա)։ Նրանք չատացնում
են սապոնի փրփուրը և չփումով սաստկաց-

Նուժ մաշկի մեռած բջիջների իջնելը և արյան
հռոանքը՝ դեպի մաշկը:

Էավաղույն հետեանքների յեն հասնում հռուն
ջրով լոգանալիս; Թասի, նույնիսկ լոգանի
մեջ լողանալը լիովին չի հասնում իր նաղատա-
կին, վորովհետև մարմինը շարունակ շրջապատ-
փած և լինում միենույն ջրով, վորը միանդամից
կեղտուավում է: Ամենից լավ և յուրաքանչյուր
անդամ մաքուր ջուր լցնել վրան:

Խիստ ցանկալի յե հաճախակի դուշով լողա-
նալը: Ամենափոքր հնարավորության դեպում
պետք ե ամեն որ դուք լինդունել կամ փոխարինել
այն ամբողջ մարմնի թաց չփումով:

Մաշկը լավ և մաքրվում բազնիքում լողա-
նալիս: Բաղնիքում մենք ունենք դուշի կամ ջուրը
վրան լցնելու հրաշալի միացումը տաք ողի հետ:
Մակայն բազնիքի ողը չափազանց տաք չպետք է
լինի, վորը նույնպես վտանդավոր ե, մանավանդ
յերեխաների համար: Բաղնիքում պետք է լողա-
նալ յուրաքանչյուր 5 կամ 6 որը մեկ, բայց վոչ
ուշ, քան 10 որը մեկ:

Դժբախտաբար վոչ բոլոր գյուղական վայրե-
րում կան բաղնիքներ:

Յուրաքանչյուր կոլտանեսություն, յերբ նա
հոգում ե մաքրության և կուլտուրականության
բարձրացման մասին, պետք ե առաջին հերթին

հասարակական ընդարձակ բաղնիք կառուցի:
Եատ կոլտանեսություններում այդ բանն արդեն
արված է: Իսկ այնուզ, վորտեղ դեռևս բաղնիք-
ներ չկան, կարելի յե լողանալ տանը, տաքացը-
քած սենյակում:

Յերեխաները շատ են սիրում ամառ ժամա-
նակ լողանալ գետում, լճում: Այդ լողանալը շմա-
ռղտակար է: Նա կոփում, ամրանդում և որգա-
նիզմը, յերեխաներին դարձնում ավելի պակաս
յենթակա մրսելուն, դարգացնում և մկանները,
սիրու և չնչական որգանները: Հայտնի յե, թե
լողանալուց հետո ինչպես լավ և զգում մարդ ի-
րեն: Բայց և այնպես չպետք ե ի չարը զործա-
գրել դետում լողանալը և ջրում մնալ այնքան
ժամանակ, մինչև մարմինը խիստ սառչի:

Պետք ե լողանալ մաքուր հոսուն ջրում:
Կանգնած լճակներում ջուրը խիստ կեղտոտված
ե լինում: Նույնիսկ գետերը հաճախ կեղտոտվում
են աղտեղությունների խառնվելով, սպիտակե-
զեն լվանալով, անասուններին ջրելով— լողացը-
նելով և այլն: Այդ պատճառով գետում լողանա-
չու տեղը ուետք ե ընօրել նման կեղտոտված տե-
ղերից բարձր:

Մակայն, նույնիսկ նման դեպում ևս չի կա-
րելի հավատացած լինել, թե ջուրը, գետի հո-
սանքով ավելի վերեր չի կեղտոտվել վորեկ տեղ:

Նշանակում ե յերրեք չի կարելի դետի ջուրը
սիանդամային մաքուր համարել:

Բացի դրանից, սաւը ջուրը, ինչպես ասված
է վերը, այնպես լավ չի մաքրում մաշկը, ինչ-
պես տաք ջուրը: Այդ պատճառով դետում լո-
ղանալը չի կարող փոխարինել բաղնիքին, և
նույնիսկ մաքուր լողանալու դեպքում ել անհրա-
ժեշտ ե վոչ ուշ, քան 10 որը մեկ լողանալ բաղ-
նիքում:

ՎՈՏՔԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Վոտքերը մաքուր լվանալու ավելի մեծ կա-
րիք են զգում, քան ամբողջ մարմինը: Որական
քանի կիլոմետր ե անցնում յերեխան, դպրոց զբ-
նալով ու տուն վերադառնալով, զրունելով և
վազվելով՝ դպրոցի բակում ու միջանցքում:
Վոտքերը հոգնում են և քրտնում, նբանք կեղ-
տուովում են: Մի քանի յերեխաների վոտքերն ա-
ռանձնապես շատ են քրտնում, հոտում և անա-
խորժ հոտ արձակում: Այդ բանը խիստ անհաճո-
յե թե իրենց՝ յերեխաների և թե շրջապատող-
ների համար:

Խորհուրդ ե տրվում ամեն յերեկո, քնելուց
առաջ վոտքերը լվանալ տաք ջրով ու սապոնով:
Ամառ ժամանակ, յերբ յերեխաները վոտքերին

և վաղվզրում, պետք ե անպայման վոտքերը լը-
վանալ ամեն յերեկո, վորպեսզի կեղտոտ վոտքե-
րով անկողին չմտնեն: Այն յերեխաները, վորոնց
վոտքերը շատ են քրտնում, պետք ե անպայման
ամանալ ամեն յերեկո:

Վոտքերի մաքուրթյան համար մեծ նշանա-
կություն ունի նաև զուլպաների ջուտ-չուտ փո-
խելը: Մաքուր զուլպաները ծծում են քրտինքը:
Վոչ մաքուր, կեղտոտված և քրտնքուա զուլպա-
ներն այլևս չեն ծծում քրտինքը, նա մնում է
վոտքերի վրա և մշտապես թաց պահում վոտքե-
րը: Զմռանը յերեխայի զուլպաները պետք ե փո-
խել վոչ ուշ, քան 5-6 որը մեկ, իսկ ամռանը,
յերբ յերեխայի վոտքերը շատ են քրտնում, վոր-
քան կարելի յե ավելի հաճախ:

Կարեռ ե հետեւ վոտքերի յեզունզներին:
Վոտքերի մատների յեղունզները չկտրելու զեալ-
քում, նրանք կոչելիք ձնչման տակ ծովում են և
յերեմն խրվում մարմնի մեջ: Այդ բանը խիստ
շավ և պատճառում և խանդարում քայլելուն:

Մատների մեջ խրված յեղունզներից աղաու-
գելու համար կարիք ե լինում ոպերացիայի դի-
մել: Դրանից խուսափելու նպատակով հարկավոր
և յեղունզները կարել իր ժամանակին:

Հատուկ ուշադիր խնամք ե պահանջում գը-
տուիր։ Գլխի մազուտ մասի մաշկը շատ հարուստ
է ճարպային և քրտնային գեղձերով։ Այդ պատ-
ճառով ել զլիսի մաշկը և մազերը առատորեն
ծածկվում են ճարպով ու քրտինքով։ Դրան միա-
նում ե փոշին, վորն ընկնելով զլիսի վրա, մնում
և մազերի միջև։ Այդ բոլորը միասին վերցրած,
հասցնում են նրան, վոր գլուխը հեշտությամբ
ու շատ շուտ կեղտուալում ե։

Այդ պատճառով գլուխը պետք ե հաճախ լը-
փանալ տաք ջրով ու սապոնով։ Անհրաժեշտ ե
ամեն որ մազերը սանրել։ Ծնդհանրապես ավելի
լավ ե, տղաների մազերը կարծ խուզել մեքենա-
յով։ Կարծ խուզած մազերն ավելի քիչ են կեղ-
տուալում։

Գլխի մազերին լավ չհետեւելու դեպքում,
կարող են նրանցում վոջիներ յերեալ։

Վոջիներ հայտաբերելու դեպքում պետք ե
անմիջապես վոչնչացնել նրանց։ Դրա համար
հարկավոր ե սկզբում թրջել գլուխը նավթով և
կապել թաշկինակով ու թողնել 10-30 րոպե, վո-
րից հետո գլուխը լվանալ տաք ջրով ու սապոնով
և սանրել մաքուր սանրով։

Այդ միջոցովհաջողվում ե վոջիները հեռաց-

նել գլխից։ Իսկ վոջիների սաղմերը— անիծնե-
րը, հաճախ մնում են, վորովհետև նրանք շատ
ամուր են նստած մազերի վրա։ Այն ժամանակ
դիմել վացումը պետք ե կատարել մի քանի ան-
դամ, մի քանի որ շարունակ։ Իսկ յերբ դա յել
չկ ողնում, պետք ե յերեխայի դլուխը խորը
խուզել։

Վոջիների գոյության հետ չի կարելի հաշ-
ուըվել։ Նրանց գեմ պետք ե պայքարել մինչեւ
վերջը, չի չելով, վոր նրանք կարող են խիստ վր-
տանգավոր հիվանդությունների— բծավոր և
հետաղարձ տիֆերի փոխադրիչները դառնալ։

Քանի վոր դեռ մենք վոչ-բոլորս ենք բավակա-
նաչափ կուլտուրական և մաքրասեր, այդ
պատճառով ժամանակ առ ժամանակ նկատվում
էն բծավոր տիֆով հիվանդանալու առանձին
դեպքեր։ Իսկ բծավոր տիֆն այնպիսի հիվան-
դություն ե, վորը յերեվան գալով վորեկ տեղ
կարող ե արագորեն տարածվել ու վեր ածվել
ամաճարակի, այսինքն ընդգրկի բազմաթիվ
ժարդկանց։ Նա շատ լուրջ հիվանդություն ե և
նրա դեմ պետք ե վճռականորեն պայքարել։

Բծավոր տիֆի վարակը տարածում են վո-
ջիները։ Վոջինը կծում ե բծավոր տիֆով հի-
վանդին, իսկ հետո՝ առողջին և կարող ե վարա-

կել նրան տիֆով։ Իսկ յերբ վոջիլներ չկան, ապա չի կարելի նաև բծավոր տիֆով վարակվել։

ՍՊԻԾԱԿԵՂԵՆ

Տարորինակ կլիներ, յեթե հետեւյին յերեխայի մարմնի մաքրությանը, չհոգալով նրան չըջապատող իրերի մաքրության մասին։

Առանձնապես կարեոր ե պահպանել այն բուրփ մաքրությունը, ինչը մոտ շփման մեջ ե յերեխայի մարմնի մաքրության հետ, ինչպես որինակ, նրա հաղուստը կամ հաղնելու սպիտակեցնը։

Մաքուր լուզացած մարմնի վրա կեղտոտ սպիտակեղեն հաղնելը—միենույն ե, թե չլողանալ։ Սպիտակեղենը խիստ կեղտոտվում է։ Նա ծծում ե մաշկի արտազատումները։ Քրտինք, մաշկի ճարպ, թափող բջիջներ այս բոլորը մընում են սպիտակեղենի վրա, խառնվելով սպիտակեղենի վրա ընկած փոշու հետ։ Յեթե յերեխաները մաքրասեր չեն, հաճախ արտաքնոց դընալու ժամանակ նրանց սպիտակեղենը կեղտոտվում ե կղանքով ու մեղով։

Կեղաը սպիտակեղենի վրա միշտ ել նկատելի չե։ Մինչդեռ 10 որ հաղնելուց հետո, սպիտակեղենի վրա այնքան կեղտ ե հավաքվում, վոր

նրա քաշն ավելանում ե մեկ տասերորդական մասով։

Լինում են վոչ միայն գլխի, այլ և չոքի վոչ ջիլներ, կորոնք ազրում են սպիտակեղենի և ապուստի վրա։ Նրանց զեմ ևս պետք է պայքարել։ Այս մասին կապի հետագայում։

Կեղասոտ սպիտակեղենը բաց չի թողնում ուր, խառնվարում ե մաշկի կանոնավոր կենսագործունեցությանը, գրգռում ե մաշկը։ Բացի որանից, կեղտոտ սպիտակեղենը կարող է ոժանգակել վարակիչ հիլանգությունների առաջանալուն։ Կեղտոտ սպիտակեղենի վրա միկրոբները շեշտությամբ են բազմանում և ավելի յերկար տպում, քան բաց ողում, կամ մաքուր սպիտակեղենի վրա։ Այդ պատճառով չի կարելի վորեն մեկի հագած սպիտակեղենն առանց նախապես վկանարու հաղցնել յերեխային։ Նոր սպիտակեղենը ես, նախ քան յերեխային հաղցնելը, պետք է լվանալ։

Սպիտակեղենը պետք ե լվանալ տաք ջրով և անպայման սապոնով։ Լվանալիս սպիտակեղենը պետք ե յեփ տալ։

Սպիտակեղենը պետք ե հաճախ փոխել մարմինը լվանալու ժամանակ 5-6 որը մեկ։

Կեղասոտ սպիտակեղենը չի կարելի պահել

բաց վիճակում, կամ դարսել մահճակալի տակ, վնչպես անում են յերբեմն։ Նա պետք է պահպի անպայման փակ արկղի կամ զամբյուղի մեջ և ըստ հնարավորության, վոչ այն սենյակում, զորտեղ քնում են։

Փոքրահասակ յերեխաների սպիտակեղեն փափելուն, եհարկե ծնողներն են հետեւում։ Բայց յնը իսկաները պետք է սովորած լինեն այն բանին, վորպեսզի իրենք հիշեն և գիտենան, թե հարկադոր ե միշտ մաքուր սպիտակեղեն կրել։

Պետք ե հետեւել, վորպեսզի յերեխաների սպիտակեղենի վրա փո՞թիլ ըլինի։ Մինելու գեղարում անմշապես լվանալ սպիտակեղենը և անպայման յեռացնել։

Վո՞լիները վերին աստիճանի պտղավետ են, արագ ու շատ բազմացող։ Մեկ վո՞թիլը մեկ ամսովա ընթացքում կարող ե տալ մի քանի հազար աերունդ։ Շորի վո՞թիլն իր ձվիկները դնում և սովորաբար ծալքերի և կարերի մեջ։ Այդ տեղերը պետք ե առանձին ուշադրությամբ նայել։

Վո՞թիլները իսկամ վտանգավոր են։ Իրենց կծելով նրանք առաջացնում են մաշկի գրգռում, քոր։ Քորը անհանդատացնում ե յերեխաներին։ Նըրանք վատ են քնում, դառնում թույլ, ներմային։ Բացի գրանից, յերեխաները չանգուառում են քոր յեկող տեղերը, չանգոված քները կարող են կեզ-

աստղել, թարախակույցներ գոյացնել։ Խոկ ամենապլխակորն այն ե, վոր վո՞թիլները, ինչպես արդեն ասվել ե, կարող են փոխանցել բծավոր և հետաղարձ տիֆերի վարակը։

ՀԱԳՈՒՍՏ ՅԵՎ ԿՈՇԻԿ

Վերնազգեստի մաքրությունն ու արտաքին տեսքը նշանակալից չափով կախված ե խնամելուց։ Սվելի չուտ դրանով, քան մի այլ բանով արտահայտվում են յերեխաների վարքն ու սովորությունները։

Պաշտպանել հաղուստը կեղտոտվելուց, անձագուր աշխատանքի ժամանակ հագնել խալաթիկ կամ գողնոց, հետեւել, վորպեսզի ուտելու ժամանակ հագուստը չկեղտոտվի, ժամանակին կարել կարված կոճակը, կարել պատովածը— այս բորբը սովորութներ են, վոր տալիս ե կանոնավոր գաստիարակությունը։ Այս սովորութները պետք ե հաստատապես ամրապնդված լինեն պարզցական հասակի յերեխաների մեջ։ Այդ տեսակետից հոկայական դաստիարակչական ազդեցություն ե թողնում մեծերի անձնական որինակը։

Հաղուստի խոզանակն այնպիսի տեղպետք ե պրված լինի, վորպեսզի յերեխաները կարողան իրենք վերցնել։ Մմեն յերեկո քնելուց առաջ

յերեխաների հաղուստը պետք է խնամքով մա-
քրրված լինի խողանակով, հնարավորության
սահմաններում այդ բանը պետք է անեն իրենք,
յերեխաները: Իհարկէ հաղուստը պետք է մաք-
րել վոչ ընակելի սենյակում: Ժամանակ առ ժա-
մանակ հարկավոր են նաև ողափոխել հաղուստը
և թափ տալ, վորովհետեւ խողանակով ամբողջ
փոշին չի մաքրվում:

Յերեխայի չհագած հաղուստը պետք է պա-
հել պահարանում և վոչ թե կախել վորտեղ պա-
ռահի:

Առանձնասկես շատ փոշի և փողոցի կեղու ե
պարունակում իր մեջ վերնազգեստը— վերար-
կուն, մուշտակը և այլն: Դրա համար նրանով
չպետք է մտնել սենյակ, այլ հարկավոր ե կախել
նախասենյակում յեղած կախարանից: Յեթե հը-
նարավոր ե, յուրաքանչյուր յերեխայի համար
խորհուրդ ե տրվում ունենալ առանձին կախա-
րան, վորը պետք է սարքված լինի յերեխայի
հասակին համապատասխան բարձրության վրա,
վորեսլի նա կարողանա պնձամբ վերցնել իրեն
իրերը: Վերարկույի համար յեղած կեսի վերե-
ռում պետք ե լինի մի ուրիշ կես կամ դարակիկ,
դլխարկի համար, վորպեսդի յերեխան ստիպված
չլինի դլխարկը կոխել վերարկույի թեքի մեջ:
Կախարաններն այսպես պետք ե սարքել, վորպես

Շի կեռերի միջև յեղած տարածությունը 25
առնտ. պակաս չլինի. այլապես վերարկուն բա-
գականաչափ չի ողափոխվի:

Անմաքրասիրության դեպքում, թե վերնա-
զգեստի և թե սպիտակեղենի վրա կարող են վո-
վիլներ յերեալ: Յեթե հաղուստի վրա վոնդիլ և
շկատված, պետք է անմիջապես տաք արդուկով
արդուկել հաղուստը, վորպեսդի հնարավորու-
թյուն չտրվի նրանց բազմանալու: Առանձին իր-
նամքով պետք ե արդուկել կարերն ու ծալքերը,
վորովհետեւ սովորաբար այդ տեղերումն են բուն
զնում վոնդիլները և ածում իրենց ձվիկները:

Յեթե չի հաջողվում արդուկով հեռացնել
վովիլներին հաղուստի վրայից, ապա պետք ե
յեփ տալ հաղուստը: Յերբեմն կարիք ե լինում
դիմելու ավելի լուրջ միջոցների— վոնդոտ,
ինչպես նաև նրա հետ շփված կասկածելի հա-
գուստը, վորը չի կարելի յեփ տալ, հանձնվում
է սանիտարական մշակման դեղինֆեկցիոն կա-
մերային:

Այստեղ, վորտեղ ինչ-ինչ պատճառներով
գեղինֆեկցիայի յենթարկելու կամ արդուկելու
հնարավորություն չկա, կարելի յե ողտվել տաք
թոնիրից, հաղուստը թափ տալով նրա մեջ: Տաք
ողը սպանում ե վոնդիլներին: Թե մեծահասակնե-

բԸ և թե յերեխաները պետք ե լողանան բաղնիքում:

Յերեկոները՝ հաղուստը մաքրելու ժամանակ յերեխաները պետք ե մաքրեն նաև կոչիկները: Կոչիկները առանձնապես հեշտությամբ են կեղուստվում փողոցում: Կոչկատակերով մենք միշտ փոշի որ կեղա ենք տուն տանում: Բնակարանի մուտքի մոտ պետք ե ունենալ քերիչ և հատակին փռած չոր, նախան մտնելը վոտքերը մաքրելու համար: Կոչիկներն ամեն որ պետք ե մաքրել խոզանակով և կոչկաքսուքով: Դրանից կոչիկը փոք միայն մաքրվում ե, այլ և յերկար պահպանվում:

Ա Ն Կ Ո Ղ Ի Ն

Անհրաժեշտ է յերեխային ապահովել նորմակառողջ քնելու տեղով՝ անկողնով:

Առաջին պարտադիր պահանջը՝ յերեխայի համար առանձին անկողին սարքելն ե:

Դժբախտաբար դեռ կան դեպքեր, յերբ յերեխան, տղա կամ աղջիկ, քնում ե միւսույն մահճակալում յեղբոր, քրոջ կամ ծնողներից վորեւ մեկի հետ: Դա շատ վնասակար է:

Քնած ժամանակ մարմինը պետք ե ուղղվի, չանգուսանա և վոչնչով նրան չպետք ե սեղմել:

Եերկուսով մեկ մահճակալի մեջ քնելու դեպքում նեղվածք ե լինում և յերեխան չի կարողանում ինչպես հարկն և հանգստանալ: Յերկուսով քնածները հաճախ իրար յերեսի յեն չնչում և ամեն մեկը նրանցից ներս ե չնչում արդեն չնչելու համար անպետք ողլը: Մոտիկ հարկանությունից մարմինը շատ ե քրտնում: Այդ բոլորի պատճառով քունը չի բերում անհրաժեշտ անդորրությունը ու հանգիստը: Իսկ յեթե միասին քնողներից մեկը հիվանդ է վորեւ վարակիչ հիվանդությամբ, որինակ թոքախտով, զրիսով, առա միատեղ քընելն առանձնապես վտանդավոր ե դառնում: Այդ գեպօռու ուղղակի հարեւանի յերեսին չնչելու նրանցից մեկը հեշտությամբ կարող ե վարակվել: Միատեղ քնելու ժամանակ սերտորեն երար մոտ լինելը կարող ե մաշկի վարակիչ հիվանդությունների, որինակ, քոսի փոխանցման պատճառ դառնալ:

Մահճակալի յերկարությունը պետք ե անպայման մեծ լինի յերեխայի հասակից, վորպետի քնած ժամանակ յերեխան կարողանա ձգվել և ուղղել իր մարմինը:

Ամենից լավ է յերեխայի համար ունենալ զսպանակագոր մահճակալ և մաղե ներքնակ, կամ քաթանով պինդ վրա քաշված թախտ: Զափազնց վափուկ անկողինը յերեխաների համար

անպետք է, վորովհեակ նրա մեջ քնելը խանգարում և վոսկորների կանոնավոր զարգացմանը։ Այդ պատճառով փետրալից անկողին— ներքնակ, բարձ դործածել յերեխայի համար, չեկարելի։ Նրանց վրա չափաղանց փափուկ և նափաղանց տաք։

Յերեխայի մահճակալը չի կարելի դնել սաւը կամ խոնավ պատի մոտ։ Չի կարելի նաև գըլթուխը դեպի վառարանի կողմն անել վորպեսզի դուխը շատ չտաքանա։

Զպետք և մտածել, թե առանձին անկողնի համար բոլոր դեպքերում ել անհրաժեշտ և առանձին մահճակալ ունենալ։ Յեթե այդպիսին ձեռք բերելու հնարավորություն չկա, կամ յեթե սենյակում տեղ չկա, կարելի յե անկողինը սարքել առանձին դրված սնդուկների կամ այլ առարեաների վրա, կարելի յե ոգտվել ծալովի մահճակալներից և այլն։

Յեթե միայն ծնողները հասկանան, թե ինչ նշանակություն ունի առանձին անկողինը յերեխայի համար, նրանք անկասկած միշտ ել կդըռնեն այդպիսին սարքելու հնարավորությունը։

Առանձին անկողին սարքելը բավական չե։ Քետք և նրան մաքուր պահել։ Այդ մասին պետք է հոգան ծնողները և վոչ պակաս չափով իրենք՝ յերեխաները։

Մեծ նշանակություն ունի անկողնի սպիտակեղենը։ Չե վոր նա ևս, հավնելու սպիտակեղենի նման, անմիջականորեն չփում և մարմնի հետ։ Յերեխայի անկողնի սպիտակեղենը պետք է բաղկացած լինի բարձի յերեսից, սավանից և վերմակասավանից, վորը կարած կամ հաղցրած պետք է լինի վերմակին։ Վերմակասավան չունեցող վերմակով ծածկվելը չի թույլատրվում։ Սովորաբար վերմակը գործ են ածում մի քանի տարի և այդ ժամանակամիջոցում նա խիստ կեղուուվում է. դրա համար չափաղանց ցանկալի յե վորպեսզի վերմակը չկպչի մարմնին։

Անկողնի սպիտակեղենը պետք և փոխել ուժին անդամ բաղանիք դնալուց հետո, համենայն դեպս վոչ ուշ, քան 10 որը մեկ։ Անկողնի սպիտակեղենը, ինչպես նաև հաղնելունը, պետք է լիմանալ տաք ջրով և սապոնով և յեփ տալ։

Մեծ նշանակություն ունի անկողնի ողափուելը։ Ամեն առավոտ, նախ քան մահճակալը չածկելը, հարկավոր է անկողնի սպիտակեղենը, թեկուզ մի քանի լուսեյով դուրս բերել պատըշդրամք կամ բակ, կամ թե փոել բաց լուսամուռի առաջ։ Ծայրահեղ դեպքում անհրաժեշտ և բանալ լուսամուռը, լավ ողափոխել անկողինը և նոր միայն շինել մահճակալի վրա։

Յերեխաները պետք է դիտենան, վոր նստել

ժահճակալին, առավել ևս պառկել նրա վրա հա-
զուսով ու կոչիներով, վոչ մի դեպքում չի
կարելի: Վերնազգեստը՝ վորի վրա շատ փոշի
կա, չպետք ե դիմչի սնկողնին:

Պատրաստվելով քնելու, յերեխան պետք ե
անի վոչ միայն ամբողջ հագուստը, այլ և
հաղնելու սպիտակեղենը, բացի շապկից: Սպի-
տակեղենով քնելը անդուրեկան ե և վնասակար՝
մարմինը բավականաչափ չի հանգստանում,
ոգի մուտքը դժվարացած ե լինում: Սպիտակե-
ռենի վրայի կապերն ու կոճակները խանդարում
են կանոնավոր արյան շրջանառությանը: Պետք
է քնել միայն շապիկով: Խորհուրդ ե տրվում,
մորպեսզի յերեխան քնելուց առաջ հանի յերեկ-
վա շապիկը և հազնի գիշերվա շապիկը: Այդ
ձեռվ ցերեկվա շապիկը գիշերն ե սղափոխվում,
իսկ գիշերվանը՝ ցերեկը:

Հանվելուց հետո հագուստն ու սպիտակե-
ռենը չպետք ե դարսել բարձի տակ, ինչպես
արվում ե հաճախ: Հագուստն ու սպիտակեղենը
զնում են աթոռին, կամ կախում կախարանին,
այնպես բաց անելով, վոր նրանք կարողանան
ողափոխվել: Ամառ ժամանակ հագուստը պետք
ե կախել բաց լուսամուտի մոտ:

ԾՆՈՂՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Բացի յերեխայի մարմնի և նրա հետ ան-
ժիշականորեն կապված՝ սպիտակեղենի, հա-
գուստի և անկողնու մաքրության մասին հողա-
լուց, անհրաժեշտ է հոգալ նաև յերեխային
շրջապատող բոլոր առարկաների մաքրության
մասին: Այդ պատճառով նրա մեջ պետք ե զար-
գացնել զբքերի, ուսումնական պիտույքների ու
բոլոր իրերի հետ խնամքով և ուշադրությամբ
վարվելու ունակություններ:

Մեծ նշանակություն ունի նաև բնակարանի՝
բնակելի սենյակի, ընդհանուր ոգտագործման
տեղերի, բակի լավ սանիտարական դրությունը:
Կարեռ ե և շատ հեշտ կարելի յե յերեխաներին
սովորեցնել կանոնավոր ողափոխելու իր սենյա-
կը, մանավանդ քնելուց առաջ. իսկ մեծերին՝
ամեն որ թաց չորով մաքրելու սենյակը:

Ծնողները պետք ե հիշեն, վոր չնայած
գողրոցում յերեխաներին սովորեցնում են առող-
ջության և մաքրության հիմնական կանոննե-
րին, վոր նույն բանին սովորեցնում են նաև
պիռներական կազմակերպությունները, սակայն
թե զոլոցի և թե պիռներական կազմակերպու-
թյան համար դժվար կլինի ամրացնել յերեխանե-

րէ մեջ մաքրության ունակությունները, յեթէ
ոյդ բանում նրան չողնի ընտանիքը:

Հատկապես տանը, վորտեղ գպրոցականն
ոնց և կացնում իր ժամանակի գլխավոր մասը,
վորտեղ անցնում են նրա առողջության կարեռ-
րագույն մոմենտները՝ ուտելլ, քնելլ, խաղերը,
հենց այստեղ ել լուծվում և այն հարցը, թե
արմատացա՞ծ կլինեն արդյոք գպրոցականի
կենցաղի մեջ մաքրության, առողջության,
կուլտուրականության ունակությունները:

Այդ տեսակետնց մեծ նշանակություն ունի
ծնողների և մեծերի որինակը: Ծնողների վրա
մեծ և լուրջ պատասխանատվություն և դրվում:
Ստեղծելով յերեխաների համար առողջ տնային
իրադրություն, պատվաստելով նրանց մեջ
մաքրության ունակություններ, իրենց անձնա-
կան վարքով լավագույն որինակը ծառայելով
յերեխաների համար, ծնողները ձեռք ձեռքի
տված գպրոցի հետ, կոմունիստական կուսակ-
ցության զեկալարությամբ Խորհրդային յերկրի
համար դաստիարակում են նոր, առողջ, կուլ-
տուրական սերունդ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կուլտուրական ունակությունների գաստիարակություն	3
Ուսելիք, խմելիք և ամանեղեն	7
Զեռքերի խնամքը	11
Լվացում	14
Ատամների խնամքը	16
Լողացում	19
Գոտքերի խնամքը	24
Գլխի խնամքը	26
Մպիտակեղեն	28
Հագուստ և կոչիկ	31
Անկողին	33
Ծնողների խնդիրը	38

Թարգմ. Ավ. Շաթիրյան
Պատ. Խորագիր՝ Լ. Խարժանկարյան
Տեխ. Խորագիր՝ Լ. Ոչանյան
Սրբազրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլուխիսի լիազոր՝ Վ. 2075 Հրատ. № 4787
Պատվեր 53. Տիպու 3000

Մեկ մամ. 25,600 նշան.

Հանձնված և արտադրության 5 փետրվ. 1939 թ.

Ստորագրված և տպագության համար 25 փետրվ. 1939 թ.

Պետհատի 1 տպարան, Յերեզան, Լենինի № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0270115

Դիմք 30 կ.

202

2020

С. М. Гром[б]а[х]

**Воспитаем у детей навыки чистоты
и опрятности**

Гиз. Арм. ССР, Ереван, 1939